

Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՎՄԱՃԱՆԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԵԹՈՎՊԻԱ

Մխիթարեան վանքիս պատմութեան մէջ բացառիկ դէմք մը կը ներկայանայ Հ. Յովհաննէս Թովմաճան կամ Թովմաճանեան, ոչ այնքան գրական փառքով՝ որքան ոգիսականօքն իր կեանքին՝ զոր ինքն իսկ գրի առած է խոշոր հատորի մը մէջ, նոսրագիր, 527 էջերով, իր 74 տարեկանին, «հրամանաւ վեհին իւրոյ Աբբայի» յամին 1790, Ս. Ղազարու մէջ, ըստ հետեւեալ յայտարարութեան՝ զոր հարկ տեսած է գրել այդ ինքնակենսագրութեան «Առաջաբանութիւն» մէջ. «Այս ինչ յայտ առնեմ որ այս Թովմաճանեան Տէր մահտեսի Յովհաննէսն երբ եմուտ ի վանս, խօսակցելով զշրջագայեալ տեղեաց նորալուր պատմութեանցն, յարմար երեւեցաւ տալ գրել նմա զպատմութիւնս ի ծննդենէ մինչեւ ի եօթանասուն չորս ամ հասակի իւրոյ զամենայն անցն՝ որք անցին ընդ նա: Որովհետեւ և զերիս մասն աշխարհիս՝ յԵւրոպիա, յԱսիա, և յԱֆրիկէ՝ զերեսուն ինքն ինչխան պետութիւնս և զթագաւորութիւնս շրջագայեալ էր:

Վասն որոյ Գերարդեղի Ստեփանոս Երկրորդ Աբբայն Մեղգոնեան, և Հոգեւոր խրատատու Հայրն՝ առաջարկին նմա գրել զպատմութիւն իւր ըստ կարգի... Ուստի և նա... սկսաւ գրել երրորդ գիմաւ վասն նկատմանց ոմանց. ուրեմն ընթերցողք մի կարծեսցեն թէ այլ ոք է որ պատմէ զնմանէ, այլ ինքն Թովմաճանն է գրեալ զամենայն, որ և այսու պարզ և անճոռնի շաւղորդութեամբն յայտ առնէ ինքն գոյն, որպէս և այս առաջաբանութիւնն իւրն է, բայց երրորդ գիմաւ խօսի»:

Ծնած է ի Կ. Պոլիս 1717ին, իր հայրն է «ազնուական բարեպաշտ ոմն ի հայոց ազգէ՝ ուղղափառ, ի Թովմաճանեան զարմէ, մահտեսի Աբբայի ամիրայ սասցեալ, հայրենեօք յերկէն թամզարայ»։ Իսկ մայրը Աբբուհի Խաթուն:

Յարութիւն - այս է մկրտութեան անունը - 1732ին վենետիկ եկած է հօրը հետ և թախանձելով վանք մտած է: Հինգ օր յետոյ հօր սիրտը չգիմանալով զրկուիլ իր յետին միակ

զուակէն - քանի որ միւս ինը հաօր, մանչ և աղջիկ, Ժանտամաշին զոհ գացած էին - կը խընդրէ զանի Մխիթար Աբբայի հետ և կը դարձնէ Կ. Պոլիս: Հուսկ տղան ծնողաց զիջումով վերջապէս կը յաջողի կրկին Ս. Ղազար մանել 1733ին:

Յաջորդ տարին Մխիթար Աբբայի փելոն կու տայ և անունը կը փոխէ Յովհաննէսի, «որ յետ 19 ամսոյ փորձութեան (= նորընծայութեան) արար զուխտ սրբոյ կրօնին և եղեւ կրօնաւոր»:

Մինչեւ 1738 կը շարունակէ իր ուսումները «գասապետութեամբ մեծին Մխիթարայ Աբբային», երբ իր հօր մահուան վրայ կը կանչուի մօրմէն, և նա դառնալու հաստատ խոստումով հրաման կը ստանայ երթալ Կ. Պոլիս: Ամէն ինչ կարգադրած շուրջ տարի մը վերջ երբ վանք կը դառնայ՝ Մխիթար Աբբայի զանազան կասկածներու և աննպաստ լուրերու վրայ՝ չի կրնար զինքը Մխաբանութեան գիրկն ընդունիլ: Յովհաննէս իսկապէս փարած Մխիթարայ ուխտին՝ խորապէս կը ցաւի, և ի զուր փորձեր ու գիմումներ կ'ընէ: Հոռոմ երթալով կը ստանայ Ս. Աթոռէն իր ուխտերուն լուծումը և կը դառնայ Պոլիս, ուր կը կարգուի և վաճառականութեան կը հետեւի, և առիթ կ'ունենայ,

Ա. ԵՐԿՐՈՊԱՅԻ մէջ ճամբորդելու՝ երեք անգամ Ռուսիան, յետոյ Հոնգարիա, չորս անգամ հայկական Թրանսիլուանիա, երեք անգամ Վիեննա, ութ անգամ Վիեննայի, վեց անգամ Հռոմ, չորս անգամ Նապոլի, երկու անգամ Ֆիլիսեպի - Լիվոռնոյ - Բիզա, Բարիզ «քաղաք Փրանսիոյ» ուր առիթ կ'ունենայ «ընդ Լուիսի տասնհինգերորդ թագաւորին երկարապէս խօսիլ», յետոյ «Մարտամ» որ է Օլանտա, ինչ կիրքնա, որ է Լոնտոն»:

Բ. Գէպ ի ԱՍԻԱ ճամբորդելով՝ կ'երթայ Երուսաղէմ, Նազարէթ. Ճիստի (ի կարմիր ծով), Մոսկայ ճեղքան Լօնիս՝ որ է երկիր Եմէնու